# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ՝ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-15/2 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգի արդյունքում 2015թ-ի *հուլիսի* 14-ին կնքված ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-15/2 ծածկագրով գնման պայմանագրում 2016թ-ի դեկտեմբերի 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ-1: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն-1: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է այն սահմանվելով մինչև 2016 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

Փոփոխության պատճառ-2: 2016 թվականին պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն-2: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նպատակով 01.12.2016թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում-1: ՀՀ կառավարության 24.11.2016թ. թիվ 1193-Ն, որոշում:

Փոփոխության հիմնավորում-2: ՀՀ կառավարության 24.12.2015թ. թիվ 1555-Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544 704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

## Համաձայնագիր-3
## 14.07.15թ. կնքված N ՖՆ-ԲՀՀԱՇՁԲ-15/2 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «01» դեկտեմբեր 2016թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Պավլովի մի կողմից, և «Սահակյանշին» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս ընկերության տնօրեն Ս.Սահակյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով ՀՀ նախագահի 2016թ. մարտի 1-ի N ՆՀ-213-Ն հրամանագիրը, ՀՀ կառավարության 2016թ.մարտի 17-ի N 329-Ն որոշումը և 14.07.2015թ. կնքված N ՖՆ-ԲՀՀԱՇՁԲ-15/2 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.4-րդ կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 24.11.2016թ. թիվ 1193-Ն որոշումը՝ Կողմերը որոշեցին երկարաձգել Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը, այն սահմանելով մինչև 2016 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

1.2 Կողմերը որոշեցին հաստատել 2016 թվականին իրականացվելիք աշխատանքների ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կապալառու |
|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | «Սահակյանշին» ՓԲԸ |
| ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք.Երևան, Արարատյան-117/1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900013202016, 900013574018 | Հ/Հ 1150000169370100 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 02224769 |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ | «Սահակյանշին» ՓԲԸ-ի տնօրեն՝ |
| Ա.Պավլով | Ս.Սահակյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

«ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ» «CAAKЯНШИН» «SAHAKYANSHIN» 02224769

Հավելված
Հաստատված է
«14» հուլիսի 2015թ. կնքված
N ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-15/2
գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2016թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը Տարի** |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ վարչական շենքի վերակառուցման աշխատանքներ | 5112 | | | | | | | | | | | | 144 720 980 | **144 720 980** |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պատվիրատու**
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝
**Ա.Պավլով**
-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կապալառու**
«Սահակյանշին» ՓԲԸ

ք.Երևան, Արարատյան-117/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02224769
«Սահակյանշին» ՓԲԸ-ի տնօրեն՝
**Ս.Սահակյան**
-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ